

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 108

3 հունիսի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի մայիսի 18-ի N 1444-Ա, N 1451-Ա, N 1462-Ա, N 1464-Ա, N 1465-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հունիսի 1-2-ը իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Մարիամ Դավթյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Կոմիտաս 55/63.
  - 2) «Հ.Վ.Բաղդասարյան» ՍՊԸ՝ ք. Երևան, Մամիկոնյանց 25/1.
  - 3) «Արշավիր Պապյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Հարավարևելյան Բ1 թաղամաս, 76/3.
  - 4) «Վաղարշ և Որդիներ Կոնցեռն» ՍՊԸ՝ ք. Երևան, Խորենացի 24.
  - 5) «Դենտա-էլիտա» ՍՊԸ՝ ք. Երևան, Ավան, Բագրատունյաց 12.
  - 6) «Դինոգուբրիկ» ՍՊԸ՝ ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 14/1.
  - 7) «Մանիա» ՍՊԸ՝ ք. Երևան, Բագրատունյաց 18 շենք, 103 տարածք.
  - 8) «Թեոֆարմա» ՍՊԸ՝ ք. Երևան, Բագրատունյաց 18 տարածք.
  - 9) «Կորոնա Սոլարե» ՍՊԸ՝ ք. Երևան, Նորքի 5-րդ զանգված, Միկոյան 4/42.
  - 10) «Նիկոլայ Ավագյան» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Տերյան 99/5.
  - 11) «Գոհար Բաղդյան» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Տերյան 105/3.
  - 12) «Տիգրան Գալստյան» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Տերյան 95-7.
  - 13) «Արման Մկրտչյան» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Տերյան 105/4.
  - 14) «Արթուր Խաչատրյան» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Թումանյան 143/2.

15) «Մկրտչյան Համլետ» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Սայաթ-Նովա 2/2.

16) «Օհանյան Տիգրան» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Սայաթ-Նովա 2/6.

17) «Մարիամ Մամաջանյան» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Տիգրան Մեծ 1.

18) «Անդրանիկ Աղաջանյան» Ա/Ձ՝ ք. Գյումրի, Իսահակյան 4գ:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 03/06/20 20:29:03 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**